Քննարկվել և հաստատվել է
Խորհրդի 17.01 2022թ. 01 նիստում
Խորհրդի նախագահ՝ Ա. Եսայան

Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի 2021 թվականի գործունեության վերաբերյալ

2021թ. ուսումնարանում դասերը կազմակերպվել է 1 հերթափոխով, շաբաթական 36 դասաժամով, հունվար ամսից մինչև մարտի 20-ը 6-օրյա աշխատանքային շաբաթով, քանի որ ուսումնական տարին սկսվել էր 2020թ. սեպտեմվերի 14-ից:Մարտի 20-ից հետո կազմակերպվել է 5-օրյա աշխատանքային շաբաթով:

Ուսումնական գործընթացը կազմակերպվել է առկա եղանակով առաջնորդվելով կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված՝ համաճարակային իրավիճակից ելնելով մշակված նախնական մասնագիտական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացի կազմակերպման ուղեցույցով: Հոկտեմբերի 29-ից ամսին համաձայն ԿԳՄՍՆ հրամանի երկու շաբաթ դասերը կազմակերպվել է հեռավար:

2021թ. ընթացքում ուսումնարանում գործել են «Ոսկերչություն՝ ոսկերիչ», «Գեղանկարչություն և քանդակագործություն՝ փորագրող փայտյա գեղարվեստական իրերի», «Համակարգիչների շահագործում՝ համակարգիչների օպերատոր», «Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում՝ ռադիոմեխանիկ՝ ռադիոհեռուստատեսային սարքավորումների նորոգման և սպասարկման», «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում՝ վարսահարդար» և «Խոհարարական գործ՝ խոհարար» մասնագիտական կուրսերը, 2021թ. սեպտեմբերի 1-ից ԿԳՄՍՆ 07.07.2021թ. 1069-Ա/2 հրամանով փորձարարական կարգով ներդրվել է «Վերականգնող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում մասնագիտության պետական կրթական չափորոշիչը:

«Խոհարարական գործ՝ խոհարար» մասնագիտական առաջին, երկրորդ և երրորդ կուրսերում ներդրված է երկակի /դուալ/ ուսուցման համակարգ, 50 ուսանող գործնական դասերը պարբերաբար /համավարակի հետ կապված սահմանափակումները հաշվի առնելով? անցկացրել են թվով 15 համագործակցող կազմակերպությունների խոհանոցներում:
Դուալ համակարգում ընդգրկված «Խոհարար» մասնագիտությամբ սովորող ուսանողներից բացի, գործատուների մոտ շաբաթական մեկ օր իրենց գործնական ուսուցման դասերն են անցկացրել «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում՝ վարսահարդար» մասնագիտական կուրսերի ուսանողները:
Տարբեր մասնագիտությունների գծով համագործակցող գործատու կազմակերպությունների թիվը կազմում է 59 է, համավարակի պատճառով 2021թ. ակտիվ համագործակցները 32 է, որից 15-ը դուալ ուսուցման համակարգով:
2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ հաստատությունում ուսանողների թիվը կազմել է 252, դեկտեմբերի 30-ին՝ 260:
Ներքին կարգապահական կանոնները խախտելու՝ բացակայությունների պատճառով ուսումնարանից հեռացվել է 13 ուսանող:

Ծնողի դիմումի համաձայն ազատվել է 9 ուսանող:
Պարտադիր զինվորական ծառայության մեկնել է 2 ուսանող, 2- վերադարձել է
Վերականգնվել է 1 ուսանող / Արցախից/:

Ուսումնարանի աշխատակիցների թիվը դեկտեմբեր 30-ին ամսին կազմել է 49 /ներառյալ հղիության և ծննդաբերության և երեխայի խնամքի արձակուրդում գտնվող 1 անձ/, որից 34 մանկավարժները ընդգրկված են մանկավարժական կազմում: Դասախոսներից 29-ը ունեն բարձրագույն կրթություն /2-ը գիտության թեկնածու/, 5-ը՝ միջին մասնագիտական:
Տարվա ընթացքում առաջացել են թափուր տեղեր. զինղեկի, անգլերենի դասախոսի, «Գեղանկարչություն և քանդակագործություն. Փորագրող փայտյա գեղարվեստական իրերի» և «Վերականգնող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» մասնագիտական կուրսերի վարպետների, համաձայն կարգի ընդունվել են զինղեկ և սնգլերենի դասախոս, մյուս երկու հաստիքները մնացել են թափուր: 2021թ. դեկտեմբերի 30-ին բնակության վայրը փոխելու պատճառով թափուր է մնացել նաև ուսմասվարի հաստիքը:

Հաստատությունում ուսումնական գործընթացը կազմակերպվել է հիմնվելով կրթության զարգացման պետական ծրագրի իրականացման, պետական կրթական չափորոշիչների կիրառման, ուսումնական պլանով նախատեսված ուսումնական գործընթացի ժամանակացույցի, կրթության իրավունքի, կրթական ծրագրերի յուրացման ապահովման և այլ նորմատիվային փաստաթղթերի վրա:
Հաստատությունում կազմակերպվել է ուսանողների փոխադրումը, ինչպես նաև համաձայն կարգի շրջանավարտների ավարտումը «Համակարգիչների շահագործում՝ համակարգիչների օպերատոր», «Ոսկերչություն՝ ոսկերիչ», «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում՝ վարսահարդար» «Խոհարարական գործ խոհարար» մասնագիտություններով: Արդյունքում 62 շրջանավարտ ստացել է պետական նմուշի ավարտական փաստաթուղթ՝ դիպլոմ, որից 3-ը՝ գերազանցության, 1 շրջանավարտ պետական որակավորման քննությանը չմասնակցելու պատճառով չի ավարտել ուսումնարանը: Շրջանավարտներից 25-ը ընդունվել է աշխատանքի, որից ըստ մասնագիտության, 10-ը՝ ոչ մասնագիտությամբ 15-ը: Նախորդ երեք տարիների շրջանավարտներից 2021թ ընթացքում աշխատանքի են տեղավորվել ևս 63-ը:

Որակավորման հանձնաժողովների հաշվետվությունները ներկայացվել է նախարարություն, եզրակացություններն ու առաջարկությունները քննարկվել են կառավարման խորհրդի նիստում:

2021 թվականին ուսանողների ընդունելությունն իրականացվել է ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատված ընդունելության կարգի համաձայն՝ օնլայն :
Ըստ ընդունող հանձնաժողովի աշխատանքային պլանի ժամանակին և պատշաճ կազմակերպել է ընդունելության գործընթացը, արդյունքների վերաբերյալ պահանջվող հաշվետվությունը ներկայացվել է նախարարություն և քննարկվել կառավարման խորհրդի նիստում:
2021թ-ին ուսումնարան հիմնական կրթության հիմքով ընդունվել են 84 ուսանող անվճար հիմունքներով և 7 ուսանող վճարովի հիմունքներով: Վճարովի ընդունված 6 ուսանողի նկատմամբ Խորհրդ որոշմամբ կիրառվել է 100 տոկոս զեղչ:

2021թ. ուսումնարանում, համաձայն ուսումնադաստիարակչական աշխատանքների ծրագրի և նախահաշվի, կատարվել են նախատեսված ֆինանսական, ուսումնադաստիարակչական, ուսման որակի բարելավման ուղղությամբ աշխատանքներ:

Ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման նպատակով ուսուցանվող մասնագիտությունների բոլոր մոդուլների համար մշակվել և ստեղծվել են ուսումնառության և դասավանդման նյութեր:
Ուսումնարանի երկրորդ կուրսի վարպետ, դասախոս Անի Պետոյանը ընդգրկվել է «Խոհարարական գործ՝ խոհարար» մասնագիտության երկակի ուսուցման համակարգի ուսանողների համար նախատեսվող խոհարարական դասագիրք և ձեռնարկ մշակող աշխատանքային խմբի կազմում:

Ուսումնական գործունեության ապահովման համար առկա են անհրաժեշտ տեղեկատվական նյութեր, դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ և ուսումնադիդակտիկ պարագաներ: Ուսումնարանի գույքը, լաբորատոր սարքավորումները, տեխնիկական միջոցները, սարք-սարքավորումները բավարար քանակությամբ են:

Շենքում առկա է հակահրդեհային, ջեռուցման և տեսանկարահանման համակարգեր: 2021թ. «Ընտանիք» ԲՀԿ-ի նախաձեռնությամբ և ֆրանսիական ԻՕվոը Դողիան կազմակերպության ֆինանսավորմամբ շահագործման է հանձնվել 101քմ տարածքով, ժամանակակից և անհրաժեշտ սանքավորումներով և գույքվ համալրված ուսումնական խոհանոց, և 101 քմ տարածքով ճաշասրահ, որը ուսանողների համար ծառայում է նաև որպես նպատակային ժամանցի սրահ: Խոհանոցի և ճաշասրահի նյութատեխնիկական բազայի համալրմանը օժանդակել են GIZ և UNDP կազմակերպությունները: նորակառույցը նվիրվել է արցախյան պատերազմում զոհված ուսանողների հիշատակին: Վերոնշյալ կազմակերպությունները կազմակերպել են նաև 150 անապահով ուսանողների անվճար սնվելու հարցը և խոհարար մասնագիտություն սովորողների գործնական դասերի լիարժեք անցկացումը: Նորակառույցը համալրված է նաև սննդային վերելակով:
Ուսումնարանը չունի բուժկետ /օգտագործվում են առաջին բուժօգնության պարագաներով դեղատուփեր արհեստանոցներում/, տիպային մարզադահլիճ /դասերն անցկացվում են հարմարեցված դահլիճում/, ուսումնական զենքի սենյակ, արտաքին երեսապատում:
Ուսումնարանի կիսանկուղային հարկում առկա են չվերանորոգված արհեստանոցներ և լսարաններ, որոնց վերանորոգման դեպքում ուսումնական գործընթացը կիրականացվի առավել արդյունավետ:
Ուսումնարանում գործում է կարերիայի կենտրոն, որի աշխատանքի արդյունքում ընդլայնվել է համագործակցող գործատու կազմակերպությունների շրջանակը:
Կրթության որակի վերահսկման նպատակով տնօրինության կողմից բոլոր առարկաներից տրվել է կիսամյակային գրավոր աշխատանքներ, մասնագիտական մոդուլներից անցկացվել կարողությունների ստուգում:
Կրթության որակի բարձրացման նպատակով պարբերաբար տեղի են ունեցել քննարկումներ մանկավարժական և կառավարման խորհուրդների նիստերում, ինչպես նաև գործատուների հետ:

2021թ-ի ընթացքում անցկացվել են նիստեր՝ մանկավարժական խորհրդի՝ 13, ծնողական խորհրդի՝ 4, որոնց ընթացքում քննարկվել են ուսումնադաստիարակչական և տնտեսական աշխատանքների, ուսանողների շարժի, ֆինանսական, տարաբնույթ միջոցառումների, կազմակերպչական, կարգապահական, ուսման որակի բարձրացման և ընդհանուր գործունեության վերաբերյալ այլ հարցեր:

Ուսանողական խորհուրդը անցկացրել է 10 /7 հերթական, 3 արտահերթ/ նիստ, քննարկվել է կազմակերպչական, կարգապահական հարցեր, նաև գործող «Ուսանողական ընկերություններիններ»-ի վերաբերյալ քննարկումներ:

Հումանիտար, բնագիտամաթեմատիկական և մասնագիտական մեթոդական միավորումները, համաձայն իրենց աշխատանքային պլանի, անցկացրել են ամենամսյա նիստեր, իրականացրել ժամաբաշխում, առարկայական դասալսումներ, դրվածքի ուսումնասիրություններ և համապատասխան այլ աշխատանքներ:

Ուսումնարանում գործող ուսանողական և ծնողական խորհուրդները, համաձայն իրենց գործունեության կարգի, ակտիվ մասնակցել են հաստատության կառավարման, կազմակերպչական աշխատանքներին, կազմակերպել ժողովներ, հանդիպումներ, միջոցառումներ:

Տարվա ընթացքում հետևողական աշխատանք է տարվել ուսանողների բացակայությունների հաշվառման և կանխման ուղղությամբ, կատարվել են տնային այցեր, կազմակերպվել ծնողական ժողովներ, հանդիպումներ հաճախակի բացակայող ուսանողների ծնողների հետ և տարվել բացատրական աշխատանքներ: Կատարվել է ուսանողների առաջադիմության ցուցանիշների հաշվառում, հսկում:

Հաշվապահական, ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ հաշվետվությունները, սահմանված կարգով, ժամանակին կազմվել, քննարկվել են կառավարման խորհրդում և ներկայացվել համապատասխան մարմիններին:
Հաստատության ֆինանսական գործունեությունն իրականացվել է Խորհրդի կողմից հաստատված նախահաշիվների և գնումների պլանների համաձայն:

Ուսումնարանում ստեղծվել են նպաստավոր պայմաններ ազատ ժամանցի կազմակերպման միջոցով ապահովելու ուսանողների ստեղծագործական ունակությունների զարգացումը, վարքի շեղումների կանխարգելումը, հոգևոր, գեղագիտական, բնապահպանական, ռազմահայրենասիրական և ֆիզիկական դաստիարակությունը՝ հաշվի առնելով նրանց հետաքրքրությունները, հակումներն ու ընդունակությունները:

«Բիզնես և կրթություն գործընկերություն» հիմնադրամի կողմից իրականացվող գերմանական «Մասնագիտական կրթություն և ուսուցում /ՄԿՈՒ/ - համագործակցություն Հարավային Կովկասում» տարածաշրջանային ծրագրի շրջանակներում առկա ուսուցման ընթացքում ակտիվ գործել են ուսումնարանի Ուսանողական ընկերությունները, որի նպատակն է խրախուսել երիտասարդների շրջանում մասնագիտական կրթությունը և ձեռնարկատիրական մտածելակերպի զարգացումը՝ խթանելով երիտասարդների զբաղվածությունը:
Ուսումնարանը շարունակում է համագործակցությունը «Ֆերտի» բարեգործական կենտրոն» Հասարակական Կազմակերպության հետ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի Փոքր դրամաշնորհների ծրագրի ֆինանսավորմամբ իրականացվող «Ցածր-ածխածնային էներգիայի ուսումնական կենտրոնների հիմնում երիտասարդ մասնագետների համար» ծրագրի շրջանակում, որի արդյունքում ուսումնարանի բակում արդեն կառուցվել է ուսումնական զրուցարան տաղավար, կահավորվել է «Վերականգնվող էներգիայի աղբյուրների և էներգաարդյունավետ տեխնոլոգիաների» կենտրոն- լաբորատորիան, հիմք հանդիսանալով 2021թ. սեպտեմբերից ուսումնարանում «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» մասնագիտության ներդրմանը:

Կատարվել են աշխատանքներ համակողմանիորեն և ներդաշնակ զարգացած հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձ ձևավորելու նպատակով:

Կազմակերպվել են սեմինարներ՝ մանկավարժների մասնագիտական գիտելիքների որակի և համակարգչային գրագիտության բարձրացման, նոր մեթոդների ներդրման և ստեղծագործական աշխատանքի զարգացման նպատակով: Խորհրդատվական աշխատանքներ են տարվել սկսնակ մանկավարժների հետ: Անցկացվել են դասալսումներ, բաց դասեր, քննարկումներ, որոնք նպաստել են թերությունների շտկմանն ու վերացմանը:
Ուսումնարանում ռազմահայրենասիրական դաստիարակության շրջանակում իրականացվել են միջոցառումներ:
Դաստիարակչական աշխատանքների շնորհիվ ազգային բանակ զորակոչված ուսանողներն աչքի են ընկել մարտական ու զինվորական կարգապահությամբ, օրինակելի ծառայությամբ:

2021 թ ՀՀ և ԼՂՀ զինված ուժերից զորացրվել են 2 ուսանող, ծառայության մեջ են՝ 30-ը:
Զինվորական ծառայության մեջ գտնվող բազմաթիվ ուսանողներ 2021 թվականի ընթացքում պաշտպանության նախարարության և զորամասերի հրամանատարության կողմից ստացել են խրախուսանքներ:

2021թ. ընթացքում ուսումնարանում կազմակերպվել են 20 միջոցառում, 11 բաց դաս, 3 համագործակցային միջոցառում, 7 մրցույթ, որոնցից կարելի է առանձնացնել՝

Մրցույթներ

«2021թ-ի սեպտեմբերիին Բիզնես և կրթություն - գործընկերություն» հիմնադրամի, Գերմանական «Մասնագիտական կրթություն և ուսուցում ՄԿՈՒ–Համագործակցություն Հարավային Կովկասում» ծրագրի կողմից կազմակերպված «Համեղ, առողջ, յուրահատուկ և անվտանգ սնունդ» խորագրով խոհարարական գրքի ստեղծման մրցույթի արդյունքներով ուսումնարանն ըստ միավորների հանրագումարի զբաղեցրեց առաջին պատվավոր տեղը, իսկ «Խոհարար» մասնագիտությամբ ուսանողներ Գրիգոր Մարդոյանը և Սամվել Նալբանդյանը «Անվտանգ բաղադրատոմս» անվանակարգում ճանաչվեցին հաղթող, և ստացան մրցանակներ:

2021թ հոկտեմբերին ամփոփվեց ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի և «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամի հետ համատեղ կազմակերպած «Էկոհամակարգի վերականգնում» տեսանյութերի մրցույթին իրենց տեսանյութերով մասնակցել են ուսումնարանի 3 թիմեր և ստացել պատվոգրեր:

2021թ-ի հոկտեմբերի 20-ին և նոյեմբերի 6-ին ուսումնարանի «Ոսկերչություն» և «Խոհարարական գործ» մասնագիտությունների թվով 15 ուսանողներ մասնակցեցին «Հայաստանի հմտություններ 2021» ազգային մրցույթի փուլին: Մրցույթին մասնակցում էին Հայաստանի տարբեր ՄԿՈՒ հաստատությունների լավագույն շուրջ 90 ուսանողներ: Փորձագետները, հաշվի առնելով ոսկերչություն և խոհարարություն մասնագիտությունների որակավորման միջազգային չափանիշները, ըստ արժանվույն գնահատեցին մասնակիցներին:
2021թ-ի դեկտեմբերի 17-ին ամփոփվեց «Հայաստանի հմտություններ 2021» ազգային մրցույթի արդյունքները., ուսումնարանի մասնակիցները գրավեցին հետևյալ տեղերը և ստացան մրցանակներ
ՀԱՅԱՍՏԱՆԻ-ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ-ՄՐՑՈՒՅԹԻ.pdf (mkuzak.am)

Ոսկերչություն մասնագիտությամբ
1. Գալստյան Վարդան Իգորի -1-ին տեղ, ոսկե մեդալ
2. Զիլիմյան Նարեկ Ալբերտի -2-րդ տեղ, արծաթե մեդալ
3. Շահբազյան Կարլեն Արմենի-3-րդ տեղ բրոնզե մեդալ

Նախընտրական փուլը հաղթահարած մասնակիցներ՝
1. Ղազարյան Սամվել Վրեժի- մասնակցության վկայական
2. Մկրտչյան Արտյոմ Մարտունի- մասնակցության վկայական

Խոհարարություն մասնագիտությամբ
1. Գևորգյան Զոհրաբ Արամի – 2-րդ տեղ, արծաթե մեդա
2. Սարգսյան Արտաշես Արտյոմի- մասնակցության վկայական

Վարդան Գալստյանը 2022թ. Հայաստանը ներկայացնելու է Շանհայում կայանալիք միջազգային մրցույթին, իսկ Զոհրաբ Գևորգյանին հնարավորություն է տրված առաջիկա ամիսներին կարողությունները զարգացնելու և կրկնակի ընտրության արդյունքում ևս մասնակցելու միջազգային մրցույթին:

2021թ.հոկտեմբերին ուսանող մասնակցեցին, «Երիտասարդ քաղաքացու օրագիրը» խորագրով շարադրությունների միջազգային մրցույթին: Մրցույթում հաղթող ճանաչվեց «Խոհարարական գործ՝ խոհարար» 3-րդ կուրսի ուսանող Արտաշես Սարգսյանը: 7 ուսանողի շարադրություն-պատմությունները ներառնված է «Երիտասարդ քաղաքացու օրագիրը» գրքի մեջ:
2021թ-ի դեկտեմբերի 10-ին Հայաստանի՝ ՄԱԿ-ին անդամակցության 30-ամյակի կապակցությամբ հայտարարված «Մեր երազանքների ապագան» թեմայով նամականիշերի պատկերազարդման մրցույթին մասնակցեցին ուսումնարանի 6 ուսանող, մրցույթը դեռևս ամփոփված չէ:
դեկտեմբերին նախագահական նստավայրում տեղի ունեցավ է «Միասին» հիմնադրամի և շվեյցարական GAN կազմակերպության հետ համատեղ՝ Ժնևի քաղաքապետարանի աջակցությամբ. «Աշկերտության զարգացումը Հայաստանում՝ շվեյցարական փորձի հիման վրա» ծրագրի շրջանակում կազմակերպած՝ «Լավագույն աշկերտ» մրցանակաբաշխությունը: Ծրագրում ընդգրկվել էին 16 կրթական հաստատություններ: Ուսումնարանի «Գեղանկարչություն և քանդակագործություն, փորագրող՝ փայտյա գեղավերստական իրերի» մասնագիտությամբ III կուրսի ուսանող Արտավազդ Գասպարյանը պագևատրվեց որպես «Լավագույն աշկերտ», իսկ «Խոհարարական գործ՝ խոհարար» մասնագիտությամբ III կուրսի ուսանող Զոհրաբ Գևորգյանը ստացավ մասնակցության հավաստագիր:

Վերապատրաստումներ

Մայիսին մասնագիտական մեթոդմիավորման 4 անդամներ մասնակցեցին 2021թ.ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից ՄԿՈՒ հաստատությունների մանկավարժական աշխատողների վերապատրաստման դասընթացին:
Վերապատրաստման դասընթացից հետո աշխատակիցները իրենց փորձն են կիսել մասնագիտական հանձնախմբի մյուս անդամների հետ:

Հոկտեմբերին ուսումնարանի դասախոսները և կառավարման խորհրդի անդամները մասնակցեցին «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնի (ՄԿՈՒԶԱԿ) ու «Բիզնես և կրթություն գործընկերություն» (ԲԿԳ) հիմնադրամի համագործակցությամբ՝ գերմանական Մասնագիտական կրթություն և ուսուցում (ՄԿՈ)-համագործակցություն Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակում իրականացված փորձի հիման վրա անցկացված վերապատրաստման դասընթացին:
Նոյեմբերին Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից իրականացվող «Մասնավոր հատվածի զարգացում և մասնագիտական կրթություն և ուսուցում Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակում Հայ խոհարարական ավանդույթների զարգացում և պահպանում» ՀԿ-ի կողմից

կազմակերպված Խոհարարություն դուալ կրթական ծրագրի վերապատրաստման դասընթացին հաջողությամբ մասնակցեց մասնագիտական մոդուլներ դասավանդող դասախոս Անի Պետոյանը:

2021թ-ի նոյեմբերի 23-ից դեկտեմբերի 8-ը GIZ գերմանական կազմակերպության պատվերով «ԻՆՖՈՒՍ» ՀԿ-ի կողմից ստեղծված ՄԿՈՒ ոլորտի ՏՀՏ դասագիրքը/ SS ոլորտի մասնագտեների վերապատրաստում՝ «Training of the TVET teachers and instructors in IT» հեռավար դասընթացին մասնակցեցին երեք դասախոսներ:

Սպորտային հաջողություններ			
ՀՀ երիտասարդների առաջնություն Գնդակային հրաձգություն	«Համակարգիչների շահագործում՝ օպերատոր համակարգչի» III կուրսի ուսանող Գոռ Խաչատրյան	12,12	Ուժեղագույն մարզիկ, ՎԹ 60 կրակոց՝ 1-ին տեղ, ՎԹ Խ-40 կրակոց՝ 1-ին տեղ
ՀՀ անկախության 30-ամյակին նվիրված ԵՀՄՊՄԴ-ի գնդակային հրաձգության բաց առաջնություններում Խաչատրյան	«Համակարգիչների շահագործում՝ օպերատոր համակարգչի» III կուրսի ուսանող Գոռ Խաչատրյան	28.11	Երեք ոսկե մեդալ, առաջին տեղեր:
Վ. Ալիխանյանի անվան 20-րդ Սամբոյի դեռահասների մրցաշար	**Պարսամյան /Փորագրող փայտյա գեղարվեստական իրերի երկրորդ կուրսի ուսանող/** Պարսամյան Համլետ	18,11	64 քաշային կարգում, 1-ին տեղ
Զեյթունի գավաթ ձյուդոյի միջազգային մրցույթ	**Պարսամյան /Փորագրող փայտյա գեղարվեստական իրերի երկրորդ կուրսի ուսանող/** Պարսամյան Համլետ	07.11	66 կգ քաշային կարգում, 2-րդ տեղ
Վանաձորի ձյուդոյի ֆեդերացիայի գավաթի բաց առաջնություն	**Պարսամյան /Փորագրող փայտյա գեղարվեստական իրերի երկրորդ կուրսի ուսանող/** Պարսամյան Համլետ	10.10	66 կգ քաշային կարգո զբաղեցրել է մրցանակային տեղ:
ՀՀ դպրոցականների «Պատանի հրաձիգ» մրցումներ	«Համակարգիչների շահագործում՝ օպերատոր համակարգչի» III կուրսի ուսանող Գոռ Խաչատրյան	19.09-20.09	Վ.Թ.Խ.Վ-40 մրցաձևում՝ վաստակելով 386 միավոր, իսկ Վ.Թ. Ն.Վ-60 մրցաձևում՝ 567միավոր առաջին պատվավոր տեղեր

2021 թվականի ընթացքում Կարիերայի ուղղորդման կենտրոնի կողմից պլանավորված 41 միջոցառումները իրականացվել են:

- Դասընթացներին մասնակցել են ուսումնական հաստատության թվով 322 ուսանող և 28 շրջանավարտ:
- Զբաղվածության կենտրոն են ուղղորդվել թվով 78 ուսանող:
- Անհատական խորհրդատվություն են ստացել 21 ուսանողներ

Միջոցառումները լուսաբանվել են ԶԼՄ-ներով, հայկական կրթական պորտալում /www.armedu.am/ և հաստատության /www.gyumriusumnaran4.am/ կայք էջում:
Պահանջվող համապատասխան հաշվետվությունները գործող կարգերի համաձայն ժամանակին ներկայացվել է նախարարություն:

Հաստատության զարգացման ծրագրով նախատեսված արհեստանոցային և լաբորատոր 360քմ տարածքների հիմնանորոգման աշխատանքները սկսվել են «Ընտանիք» ԲՀԿ-ի նախաձեռնությամբ: Աշխատանքներ է տարվում հիմնանորոգված տարածքները նոր նյութատեխնիկական բազայով համալրելու նպատակով:

Տնօրեն՝ Ք. Ահարոնյան